

Երևանի պետական համալսարանի  
«Կայուն զարգացման» կենտրոն

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

ԵԱՀԿ “Capacity Building for the Centre on Sustainable  
Development” նախագծի  
(01.05.2012 - 22.12.2012)

° \_\_\_\_\_ ° \_\_\_\_\_ ° 2012 թ.

ԿԶԿ ղեկավար

-----  
Ռ.Մովսեսյան

Երևան 2012

## 1. Աշխատակազմը՝

- Ուրբեն Սուրենի Մովսեսյան - կենտրոնի ղեկավար
- Գուրգեն Մուշեղի Ալեքսանյան – կենտրոնի համակարգող
- Լիանա Ստյոպայի Մանուկյան – թարգմանիչ, ԵԱՀԿ գրասենյակի հետ կապի պատասխանատու

## 2. Նախագծի տևողությունը՝

- 2012 թ.-ի մայիս 1-ից մինչև դեկտեմբերի 22-ը

## 3. Կենտրոնի նպատակները

Կենտրոնը պետք է աջակցի Կառավարությանը ՄԱԿ-ի Կայուն Ձարգացման փաթեթի իրագործմանը ազգային և տեղական մակարդակներում, ապահովելով հանրության մասնակցությունը բոլոր փուլերում: Կենտրոնը պետք է նպաստի շրջակա միջավայրի հարցերում հանրության մասնակցությանը և հասարակության համար թափանցիկ միջավայրի ստեղծմանը:

## 4. Կենտրոնի խնդիրները և գործառույթները

- 1) Համալսարանի կարողությունների հզորացում, որպեսզի վերջինս գործի, որպես Ռիոյի սկզբունքների խթանման ու իրականացման ռեսուրս և գիտաուսումնական կենտրոն, ինչպես նաև իրականացնի կարողությունների զարգացման համապատասխան ծրագրեր;
- 2) կառավարության համապատասխան քաղաքականության ու ծրագրերի հարցում աջակցելու նպատակով կլոր սեղանների, քննարկումների. աշխատաժողովների կազմակերպում՝ շահագրգիռ տարբեր կողմերի մասնակցությամբ, նրանց կարծիքներն ու տեսակետները հաշվի առնելու համար;
- 3) աջակցել կառավարությանը կայուն զարգացման վերաբերյալ միջազգային պայմանագրերի, հանդիպումների և լավագույն փորձի մասին իրազեկման բարձրացմանը;
- 4) անհրաժեշտության դեպքում ՀՀ մարզերում գտնվող Օրիուս կենտրոններում կայուն զարգացման դասընթացների կազմակերպում շահագրգիռ կողմերի համար:

## 5. Կատարված աշխատանքը

Համաձայն մշակված աշխատանքային պլանի կենտրոնում կատարվել են ուսումնասիրություններ երկու թեմաներով՝ «Հայաստանի սողանքների հիմնախնդիրները» և «ՀՀ լեռնաարդյունաբերության տեխնաժին թափոնները. օգտագործման տեխնոլոգիական, տնտեսական և բնապահպանական խնդիրները»:

Նշված թեմաների մշակման համար ներգրավվել են մասնագետ-փորձագետներ, որոնք կատարել էին ֆոնդային և տպագիր նյութերի հավաքագրում ու մշակում, դաշտային ուսումնասիրություններ և ստացված նյութերի վերլուծություն ու ամփոփում:

Կենտրոնի աշխատանքային պլանի մեջ էր ընդգրկված նաև 2012թ-ի հունիսի 12-22-ը Բրազիլիայի Ռիո Դե Ժանեյրո քաղաքում «Կայուն զարգացմանը» նվիրված Միավորված Ազգերի Կազմակերպության «Ռիո+20» գազաթնաժողովի արդյունքների և այնտեղ ներկայացված ՀՀ կայուն զարգացման ազգային ծրագրի գնահատականների մասին հանրությանը տեղեկատվության տրամադրումը:

Առաջին կլոր սեղան – քննարկումը կազմակերպվեց ս.թ. հուլիսի 9-ին, ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում: Միջոցառման առաջին մասում, Հայաստանի սողանքների հիմնախնդիրներին նվիրված, զեկուցումով հանդես եկավ ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան, երկրաբանական.-հանքաբանական. գիտ. թեկ. Մարատ Գրիգորյանը: «ՀՀ տարածքում սողանքային երևույթների հետազոտությունների արդյունքները և ներկա իրավիճակը» վերնագրով զեկուցման մեջ, բացի սողանքներից, նա անդրադարձավ նաև այլ վտանգավոր երևույթներին՝ փլուզումներին, քարաթափումներին, սելավներին և այլն: Ձեկուցողը վերլուծեց վերջին տարիներին այդ ուղղությամբ Հայաստանում կատարված աշխատանքների արդյունքները, նշված վտանգավոր երևույթների կողմից հասցված սոցիալ-տնտեսական վնասները և նրանց վերացմանն ուղղված միջոցառումները: Նա նշեց, որ Հայաստանում հակասողանքային միջոցառումներ չեն իրականացվում, իսկ վերջիններիս արդյունավետ կատարման համար նախապես անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել վտանգավոր երևույթները և ստացված արդյունքների հիման վրա նախատեսել հակազդեցության միջոցառումներ: Նա մանրամասն ներկայացրեց անհրաժեշտ ուսումնասիրությունների և միջոցառումների պլանը:

Սողանքների հիմնախնդիրներին նվիրված քննարկումներին մասնակցում էին ոչ միայն ԵՊՀ տարբեր ֆակուլտետների և ստորաբաժանումների ներկայացուցիչներ և ուսանողներ, այլև բնապահպանական ոլորտի ՀԿ-ների՝ «Արագ» բարեգործական ՀԿ, Էկոլոգիական հասարակական դաշինք, «Ազգային ջրային համագործակցություն», «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցացիա», «Սպառողների աջակցման կենտրոն» և այլն, Երևանի Օրիուս կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ներկայացուցիչներ:

Կլոր սեղան - քննարկման երկրորդ մասում ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի պրոֆեսոր և «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցացիա» ՀԿ-ի նախագահ Կարինե Դանիելյանը ներկայացրեց «Կայուն զարգացմանը նվիրված ՄԱԿ-ի «Ռիո+20» գազաթնաժողովի արդյունքներն և ՀՀ ներկայացուցիչների կողմից կազմակերպված միջոցառումը» ցեկույցը:

Ձեկուցումներից հետո տեղի ունեցան քննարկումներ, արվեցին առաջարկներ, որոնք կենտրոնի աշխատակիցները հաշվի առան ՀՀ Կառավարությանն ուղղված իրենց առաջարկություններում:

Երկրորդ կլոր սեղան – քննարկումները կենտրոնը կազմակերպեց ս.թ. նոյեմբերի 7-ին: Այն նվիրված էր ՀՀ լեռնաարդյունաբերության տեխնաժին թափոնակույտերին: «ՀՀ լեռնային արդյունաբերության տեխնաժին թափոնները. օգտագործման տեխնոլոգիական, տնտեսական, բնապահպանական խնդիրները» թեմայով զեկուցեց ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբ.-հանք. գիտ. թեկ. Ռուբեն Մովսեսյանը: Նրա զեկույցը հիմնված էր կենտրոնի աշխատակիցների և մասնագետ-փորձագետների կողմից ֆոնդային և տպագիր նյութերի, ինչպես նաև դաշտային աշխատանքների արդյունքների վերլուծության ու ամփոփման վրա: Ձեկույցում մասնավորապես նշվեց, որ ՀՀ-ն լինելով

ավանդական լեռնահանքային երկիր, իր տարածքում կուտակել է մեծածավալ տեխնածին թափոններ: Նշվածների գերակշռող մասը առաջացել են մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի արդյունահանման արդյունքում: Այդ տեխնածին թափոնները կարելի է դիտարկել որպես հանքային հումքի կորզման լրացուցիչ աղբյուրներ և որպես կուտակումներ, որոնք վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար: Տեխնածին կուտակումների վնասագերծման և տնտեսական շահույթի ստացման նպատակով առաջարկվեց կատարել հանքային հումքի ամբողջական, համալիր մշակում և իրականացնել որոշակի բնապահպանական միջոցառումներ: Քննարկումների արդյունքում ներկայացվեց անհրաժեշտ միջոցառումների ցանկը:

Կլոր սեղան-քննարկումներին մասնակցում էին ոչ միայն համալսարանականները (ԵՊՀ տարբեր ֆակուլտետներից և գիտական կենտրոններից), այլև բնապահպանական ոլորտում աշխատող մի շարք հասարակական և գիտական կազմակերպությունների (Վայուն Ջրային Միջավայր, «Խազեր» էկոլոգամշակութային, Չանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա և այլ ՀԿ-ների), ԵՃՇՊՀ գեոէկոլոգիայի ամբիոնի, ՀՀ ԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի, Երևանի, Ալավերդու, Գավառի Օրիուս կենտրոնների, ՀԳԱԱ Երկրաբանության ինստիտուտի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ մի շարք հեռուստակենտրոնների (Ար, Արմնյուզ, «Երկիրնեդիա», Ա1+) և թերթերի (Ղեկվոյ էկսպրես, Առավոտ) ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության պետի տեղակալ Իգոր Սարգսյանը:

Ձեկուցումներից հետո տեղի ունեցան մտքերի փոխանակումներ, արվեցին առաջարկություններ, որոնք կենտրոնի աշխատակիցները հաշվի առան ՀՀ Կառավարությանն ուղղված իրենց առաջարկություններում:

#### **4. Ներգրավված ֆինանսական միջոցներ**

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը, ԵԱՀԿ - ԵՊՀ պայմանագրի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան ԵՊՀ-ին է փոխանցել՝

- 2012թ.-ի մայիսի 10-ին, 4500 եվրոյին համարժեք - 2 336 423 ՀՀ դրամ (1 եվրոն = 519.2 դրամ փոխարժեքով),

- 2012թ.-ի հուլիսի 29-ին, 4500 եվրոյին համարժեք - 2 238 419 ՀՀ դրամ (1 եվրոն = 497.4267 դրամ փոխարժեքով):